

Ներքին հաստատ պահանջները և որոշակի օգտագործող պատկեր զին-
րաւորութիւնը Եւրոպայի մէջ խառնակութեան որ և ինչ պատ-
ճառէն մեծ փութով զգուշանալով կառավարութեան պարտք
սխալի համարաւի, և մեր բոլոր խնամքը ներքին բարեկարգու-
թիւններու վրայ պիտի ըլլան, որոնք միայն կարող են մեր երկրի
յաջողութիւնը ապահովելընել, և աշխատաւոր դասերը երջանիկ
ընել:

Կայսերութեան ժամանակին օրէնքները և յիշատակները
նորէն հաստատելով տեսնելով շատ անգամ ըսին որ կայսերութե-
թիւնը հաստատելը կը փախաբիմ: Եթէ անանկ մէկ դիտաւո-
րութիւն մը ունենալու ըլլայի, առ փոխակերպութիւնը շա-
տաւոր կը կատարուէր, ոչ միջոցներ և ոչ առիթները պահա-
ւէն:

1848 ին երբ որ սահմանադրական ժողովոյն կամարը հա-
կաւոր վիճակ մը քուէարկութիւնով ընտրուեցայ՝ աղէկ գի-
տէի, որ սահմանադրութիւնը չընդունելու յօտարութի յու-
ցնելու ըլլայի, կայսերական ակնու ձեռք՝ բերելու կարող
կըլլայի: Բայց ծանր անկարգութիւններ ծագելու հարկաւո-
րաբար պատճառ ըլլալը բարձրութիւնը չմտնեցայ զիս:

1849 Յունիսի 15 ին նմանապէս գիւրիս էր կառավարու-
թեան ձեռք փոխել, բայց չուզէր ընելու:

Վերջապէս անցեալ դեկտեմբերի 2 ին անձնական մտա-
ծութիւնները երկրիս մեծ օգուտներուն վրայ նախադաս հա-
մարելու ըլլայի նէ, ժողովուրդէն մեծաւոր տխուր մը կը
պահանջէր, որն որ ինձմէն չէր խնայեր: Բայց ան ատենն ալ
իմ ունեցածովս բաւականացայ:

Ուստի հիւպատոսութեան (քօնախալ) և կայսերութեան
ժամանակներէն օրինակ տեսնելովս պատճառ ան է, որ ազգայ-
նութեան և մեծութեան նշաններով զանոնք դրօշակ կը գտ-
նամ: Հիմա ինչպէս և առաջ Գաղղիոյ համար ամեն բան և ինձ
համար ոչ մէկ բան ընելու հաստատ մտադիր ըլլալով՝ անկեր-
հարկաւորութեան մինչև որ չընտրուիմ նէ, կառավարութե-
այժմեան վիճակին մէջ ոչ մէկ փոփոխութիւն կ'ընդունիմ: Եւ
ասանկ հարկաւորութիւն մը ըստ ինչ կրնայ ծագել մի միայն
կուսակցութեանց վարձուներէն:

Եթէ կառավարութիւնները իմ կամարս հետ կը միաբանին,
բան մը չգիտեմ: Բայց եթէ գաղտնի հնարքով կառավա-
րութեանն հիմունքը խախտելու կ'աշխատեն, եթէ իրենց մը
ընտրութեանը մէջ հասարակաց ընտրութեան օրինաւորութիւնը
կ'ընտանան, վերջապէս եթէ իրենց յարձակմունքներով երկրիս
ապագայ երջանկը վտանգի մէջ կը ձգեն, ան ատենը
միայն Գաղղիոյ հանդարտութեանը համար ժողովուրդին կող-
մէն ինձ տրուած իշխանութիւնը անսահման իրաւի մը գը-
լաւու վրայ հաստատելու նոր տխուր մը աղէկ ուղիւ արգար
և օրինաւոր է: Բայց ամենին հաւանական չեղած գտուա-
րութիւններով փութելովս յառաջուց չըլլալուցս:

Հասարակացութիւնը պահպանելը, որ մարդու մը ըս-
պառնալիք չընդունիր և ամեն մարդ կը հանդարտեցնէ: Եւ
դրօշակին տակը՝ հաշտութեան և անխաղաղութեան նոր դար
մը սկսիլ կը ցանկամ, և հասարակաց օգտին համար ինձ հետ
անկեղծաբար դրժմակցի ըլլալ ուղղութեան ամենն ալ անտար-
բէր կը հրաւերեմ:

Ղառին շատ տեղուանքը մեծ ծախսա-
րութիւններով և ինչնէ՝ նախօքն բարձրաձայն
մարդներով ընդունուեցաւ:

Ընկէ ետքը տեղութեան նախարար Սօի-
էօ Բազապիանան, հետեւեալ երգումը
կարդայ, և ներկայ գտնուող սինկլիտոմնե-
րուն և պատգամաւորներուն անունները տա-
լով՝ աս երգումը ընելու հրաւիրեց:

Սահմանադրական օրինաց հնազանդութիւն և նախագահ
իշխանին հաւատարմութիւն կ'երդնում: Դաս կ'երդնում և
կը խոստանամ իմ պաշտօնները աղէկ և հաւատարմութեամբ
կատարել, խորհուրդներուն գաղտնիքը երկեղածութեամբ
պահել, և ամեն բանի մէջ հաւատարմութեամբ բարի պաշտօնայի
պէս վարուիլ:

Եթե՛ս իշխանը առաջ երգուեց, և եր-
կու խորհրդանոցներուն բոլոր անդամները
նմանապէս երգուեցան: Բայց ներքեւ զօրա-
պետին և Սօիէօ Բարնոյին անունը յիշուած
ատենը չպատասխանեցին, կամ ներկայ չգտ-
նուելով և կամ երգուիլ չուզելով:

Յարգւոյ ընթերցողներուն յայտնի է թէ
նախագահ իշխանին հրովարտելով որոշուած
է որ հասարակապետութեան բոլոր պաշտօն-
եանները աս երգումը պիտի ընեն մէկ ամառ-
վան մէջ:

— Օրէնսդիր ժողովոյն մէջ եղած հակա-
ճառութիւններուն հրատարակելը արգել-
ուած է: Ընդամենը ատենարանութիւն
ները առանց հրամանի տպողը 500 էն մինչև
հինգ հազար ֆուանք մոռեանք վճարելու է,
և զանոնք անդին անդին բաժանողը 5 էն մին-
չև 500 ֆուանք հատուցանելու պիտի դատա-
պարտուի:

— Նախարարներուն ուսձիկները 100,000 էն
մինչև 130,000 ֆուանքի որոշուեցաւ:

— Օրէնսդիր ցեղին կալուածներէն 35
միլիոն ֆուանքի չափ վաճառուեցաւ, մա-
ցածը հասարակապետութեան կալուածնե-
րուն հետ միաւորուեցաւ:

— Գաղղիոյ երկիրները պաշարման վիճա-
կէն ազատութիւն գտան:

— Նախագահ իշխանը հրովարտակ հանեց
որ փարիզ Դան — Գ — Լ լիզէ ըսուած մեծ հը-

րապարակին մէջ 1 օնտոնի բիւրեղեայ պա-
լատին նման մեծ շինուած մը հաստատուի
թէ՛ հասարակաց մթերացոյցներու (էքսփո-
զիտիօն) և թէ՛ քաղաքական կամ զինուորա-
կան հանդէսներու համար:

ԱՆԳՆԻՍ: 1 օնտոն 29 մարտի:

Ըմեն մարդ ազգային խորհրդանոցին լուծ-
ուելուն կ'ըսպասէ. անոր համար հիմակուց
պարտատուութի տեսնուելու վրայ է, որ ընտ-
րութիւնները առանց ժամանակ կորուսանե-
լու ի գործ դրուելով՝ խորհրդանոցին նոր
անդամները կրնան շուտով ժողովուրդ: Կը-
սեն թէ ազատականներու կողմէն 1 օրոտ Ղօն
Բասէլը և նոր նախարարները համաձայնե-
ր են, որ ազգային խորհրդանոցի լուծուելուն
օրը մինչև մայիսի սկիզբը երկարաձգուի:

— Ընդգային խորհրդանոցին մարտի 23 ի
նիստին մէջ երկար խօսակցութիւններ եղան
Լանկեմփի Խայրէշի (բարեկարգութիւններու)
վրայ, որուն Լգիսլատուի մէջ ալ գործադ-
րուիլը Օրմանեան մեծազոր տերութիւնը կը
պահանջէ: Սխալ տ'իղարկելն Տաճկաստա-
նի և Լգիսլատուի մէջ տեղը եղած վեճին վե-
րաբերեալ պաշտօնական թուղթերը չուղեց
խորհրդանոցին հաղորդել, յիշեալ վեճը դեռ
լըմնացած չըլլալուն համար: 1 օրոտ Բասէլը
ըսաւ թէ Լնգլիան Սուլթանին և հպատակ
փաշային մէջ տեղը եղած վեճին մէջ բարե-
կամական խրատներ տալէն զատ կերպիւ մը
խառնուելու իրաւունք չունի. և կը յուսայ
որ աս խրատները կրնան ընդունուիլ եթէ
խոհմութեամբ տրուելու ըլլան, և գործը
դեռ չըլմնացած գործառնութիւնները չըհրա-
տարակուին նէ:

— Գաղղիոյ հասարակապետութեան գես-
պան Սալեմբիի կոմսը մարտի 19 ին 1 օնտոն
հասաւ:

— Օրէնսդիր գերագոյնին բոլոր իշ-
խանները քիչ օրէն 1 օնտոն պիտի գումար-
ուին: Օմալի գուքը արդէն հոն գայած է
միայն Սօնփանսիէի գուքը դեռ չէ հասած:

— 1851 Տարւոյն Լնգլիոյ կառավարու-
թեան հաշիւէն կ'երեւի, որ մէկ տարուան ե-
կամուտը 52,233,000 ֆուան և ծախքը 49,506,610
ֆուան ըլլալով՝ սպրեւնի գանձուն 2,726,390
ֆուան կամ մօտ 300 միլիոն օսմանեան դահե-
կան աւելի մնացեր է:

— Լնգլիոյ օրմարայի ամեն բաժնակիցները
ժողովուրդով՝ փետրվարի 28 ին վերջացած
վեցամսեայ հաշիւը նայեցան, որմէ յայտնե-
լեցաւ որ 546,572 ֆուան սթէռլին, այսինքն 60
միլիոն զուռուշէն աւելի շահ եղեր է վեց
ամսուան մէջ, ըսել է որ դրամագրւելները
հարկւրին 4 վաստիկեր են:

ՌՈՒՍՍՍՏԱՆ: Պետրբուրգէն երկած
նամակէ մը (որն որ մարտի 26 թուականով
Պրիւսէի Լանկեմփի լրագրին մէջ կը
կարդանք) կ'իմանամք, թէ Ռուսիոյ վեհա-
փառ կայսեր բժիշկները խորհուրդ տուին որ
նորին կայսերական մեծութիւնը՝ Գաղղիոյ
սահմաններէն քանի մը միլոն հեռի Նասաւ
ու մեծ դքսութեան երկիրներուն մէջ զբո-
ւոյն Շուարթսի հանքային ջուրերը միւտ-
նայ: Ատոն վեհափառ կայսրը ամեն մը յիշ-
եալ տեղը պիտի երթայ Գերմանիայէն անց
ներով: Կըսեն թէ Ն. Կ. Ս. Վ. իշխան, Պեռ-
լին և գուցէ Սիւնիի քաղաքներն ալ այցե-
լութիւն ընելու մտադիր է:

— Մարտի 3 ին Պետրբուրգի լրագիրը կովկա-
սու կողմանց վրայօք հետեւեալ լուրերը կու-
տայ:

Օրապետի տեղակալ Պարիադինսքի իշ-
խանը Չէնայի ներքին կողմերուն վրայ քա-
լեց: Յունիսի 10 ին մեծ Չէնայ գնաց ու
5 գեղ կործանեց: 18 ին փոքր Չէնայի վրայ
արշաւեց: Բրուքլին քաղ զօրապետը հե-
ծեղաօրաց գնդովը 6 գեղ պաշարեց, բայց
գործքին յաջողէն ետքը թշնամեայ գնտա-
կէն զարնուելով մեռաւ: Ռուսաց հետեակ
զօրքը թշնամեայ վերաբերեալ 2000 անգուս-
տան աւրեցին:

Վրէլքի զօրապետը հողատարներէն

ամրացուած լեռանց կիրճերէն (տէրպէնտ)
4 վաշտով (թապուր) ու 10 թնդանօթով
վեր ելաւ և ընդարձակ լեռնատափ (տիւզ
թէփէ) մը հասաւ ուր շատ Չէնայներ
կը բնակէին: Ըստմէ ամփոխ մը Լը-
մուրսա — Խափցով — Նայիպին առաջնորդու-
թեամբը թշնամեայ վրայ յարձակեցաւ. բայց
ուսք այն կողմերը գտնուած ամեն բաները
կրակի տուին ու Չէնայներուն առաջնորդը
ալ զարկին: Ըս պատերազմներուն մէջ Բրու-
քլին, Պրէթլին, Վորոնցով, Իշխանը
և Լիքօլայ Սեպուհը և ուրիշ զօրապետներ
մեծ քաջութիւններ ցրին:

— Տաղստանի ապստամբ լեռնականներն
ալ պատժուեցան: Օրապետի օգնական Լը-
ղուեց Լրկայնաբաղուի հայկազուն իշխանը,
իմանալով որ Բէի Ժակօփի գուռը Տաղստանի
այսին լեռնակողմը քաշուած ու պատնէշ չե-
նելով ամրացած կեցած է, յունիսի 14 ին
4 վաշտ հետեակազօր ու քանի մը վաշտ ալ
սորիէան խալիկէր և 6 թնդանօթ Սուսով զօ-
րավարին յանձնեց, ու հրամայեց որ առաջ
քաղցրութեամբ հնադանդեցներու աշխա-
տի, և եթէ քաղցրութիւնը չյաջողի՝ զէնքին
զօրութեամբ նուաճէ զանոնք, և ապստամ-
ներուն Դէիլի գեղը կործանէ: Սուսով զօ-
րավարը աս հրամանով յունիսի 16 ին Գար-
Վայա — Փիր լեռան վրայ թշնամներուն պա-
տահեցաւ ու քաջութեամբ վրայիս յարձա-
կելով պատնէշին առաւ ու զանոնք փախուց,
մէկ դրօշակ ձեռք ձգելով: Ռուսաց զօրքը
17 ին Սիթքիլ ապստամբ գեղը հիմնադատակ
ըրին: Վերջապէս 18 ին ամբողջ օր մը սա-
տիկ կուռուելով Դէիլի գեղը առին որ պատ-
նէշներով աղէկ ամրացուած էր: Ըստամբ-
ներուն շատը կրակին մէջ և փլատակներուն
տակը մնացին, ու Լայիպ — պէկ — Սահմեւ
ալ վերաւորուելով Ռուսաց ձեռքը գերի ին-
կաւ, որոնք 6 դրօշակ ու Դամիլի կողմանէ
Պէկ Սահմեւ տիւն տրուած տապարը (պալ-
թա) և 200 ձի տուին:

ԱՒՍԴՐԻՍ: Վ իշխան 30 մարտի:

Ռուսաց կայսերութիւնը Լիքօլա և Կոստան-
դին մեծ գուքերը, որոնք քանի մը ժամա-
նակէ հետէ Վ իշխան կը գտնուին, իրենց օ-
գոտափառ Տօրը կողմանէ՝ նամակ մը յանձ-
նեցին Լնգլիոյ կայսեր, հրաւիրելով որ ա-
ռաջիկայ յունիս ամսոյ մէջ Սոսով քաղաքը
ըլլալու մեծ զօրահանդէսներուն ներկայ գտ-
նուի: Կըսեն թէ Դրամստաւ Եօզէֆ կայս-
րը աս հրաւերը ընդունեց:

ԱՄԵՐԻԿԱ: Նիւ Եօք 10 մարտի:

Սիւսեալ նահանգաց հասարակապետու-
թիւնը Ռաւլինկլին պատրաստութի կը տես-
նէ, որ Ղափոնի կայսերութեան վրայ 8 պա-
տերազմական նաւ խաւրէ: Ըս նաւերուն
մէկ քանի հատը տրդէն խաղաղական Ռիկիա-
նոսի ծովերէքը կը գտնուին: Ըս պատերազ-
մական արշաւանաց նպատակը ան է, որ Ղա-
փոնի մայրաքաղաք Ղէտաոյի երկիրը չըքը հա-
նելով յիշեալ կայսերութիւնը բռնադատեն
որ իւր նաւահանգիստները աշխարհիս առեւ-
տրական նաւերուն բանայ, ու թոյլ տայ որ
ներս մտնան:

ՓՕՐԹՈՒԿԱՆ: Ի խայն 10 մարտ:

Թաղուհին և լծակիցը սահմանադրութե
զօրութիւնով իրենց նշանակուած ուսձիկնե-
րուն մէկ մասը արքունի գանձուն թողեր են:
ճանրութիւնները քիչ մը թեթեւցնելու հա-
մար՝ կը հաւատարմութեամբ որ աս օրինակին բար-
ձր անտիճանի պաշտօնեաներն ալ հետեւին,
որոնք մեծ ուսձիկներ ունին:

ՀՆԴԿԱՍՏԱՆ: Վոմպայ 3 մարտի:

Լրեւելեան Հնդկաստանի ընկերութիւ-
նը Պրմաններուն հետ խաղաղական կեր-
պիւ մը վեճերը լըմնուցնել չի կրնալով՝ որդ-
չեց որ մարտի 12 ին 6000 զօրք և պատե-
րազմական նաւախումբ մը ուղարկէ:

Սրբ. Բօլէն. Բէմիլլին հրամանատարու-

1 Որի կառակալ իշխանին Կովկասեան հաւատաց:

Թեան տակը եղած զօրքը Փիշաղէր երկիրը հասան. Առեւտուրը հանդարտ է. ստակն ալ շատ առատ:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պարոն Նիկողոս տէր Հմառնեան ազգաւոր աղետահանը (որուն անունը յիշած եմք շաբաթագրիս առաջին թերթին մէջ) Ռուսաց Կիլիսիա լրագրէն հանելով՝ հետեւեալ յօդուածը մեզ ուղարկել էր անցեալները, որն որ մենք ալ մեծաւ յօժարութեամբ համառօտեցինք: Այսեան Աղաւնայն բերանով յարգի ընթերցողաց կը հաղորդեմք, աներկ բայ յուսալով որ ինչպէս մեր նոյնպէս ալ ամենուն ուրախութեամբ պատճառ պիտի ըլլայ:

Ռուսաստան Համախի բաղադր, սրբուհւոյ Ռուսաւաճանայ անունով հայոց եկեղեցւոյ մը հիմնադրութիւնը եղած էր 1840 ին: Բայց բարեպաշտ հասարակութենէն ժողովուած գումարը չբաւականանալով՝ յիշեալ եկեղեցւոյն շինութիւնը հաղել գլխաւոր լուսամուտքը հասաւ, և երկար ժամանակ երեսի վրայ մնաց: Աստուծոյ նախախնամութիւնը չկամեցաւ որ Համախի ժողովուորը զը շատ ատեն անմխիթար մնայ, և քրիստոնէական սուրբ հաւատոյ շնորհքը լեցուած Ներսիսեան Պետրոս և Սովետս աղաները շարժեց, որ իւր տաճարին շինութեան աւարտմանը գործը ըլլան: Յիշեալ երկու ազնուական եղբարքը, որ Համախի պատուաւոր բաղադրացիներէն են, նոյն բաղադրի հասարակութենէն խնդրեցին, որ եկեղեցւոյն շինութիւնը իրենց քսակէն աւարտելու թոյլ տան:

Հասարակութեան շնորհակալութեամբ յօժարութիւնը և վեհափառ Վաթուղիկոսի քաջաբերական հրամանը ձեռք բերելով՝ Ներսիսեան եղբարքը յիշեալ եկեղեցւոյն աւարտեցին որ գեղեցկութիւնով, ընդարձակութիւնով և ընտիր գիւղերով քաղաքին երևելի շինուածներէն մէկն է: 1850 ի հոկտեմբերի 14 ին՝ ռուսաց կայսերութեան ժառանգ Ալեքսանդր մեծ իշխանը Համախի գլխավոր հայոց նորաշէն եկեղեցւոյն այցելութիւն ընելու բարեհաճեցաւ, և Ներսիսեան եղբարք ալ նորին կայսերական բարձրութիւն յայտնեցին որ օժման համագեղար կատարուելէ ետքը առաջին պատարագը ըլլալու առիթը՝ առաջին աղօթքը՝ առաջին այցելու կայ կայսերազին կենացը համար պիտի ըլլայ:

Հետեւեալ նոյեմբերի 25 ին գերապատիւ Պետր արքայան արքեպիսկոպոսը (որն որ վեհափառ Ներսէս արքայապետի վաթուղիկոսի հրամանաւր իջնածինէն Համախի եկած էր) յիշեալ եկեղեցւոյն օժման հանգէտը կատարեց ի ներկայութեան զինուորական գաւառապետի, գլխաւոր զինուորական և քաղաքական աստիճանաւորաց, բոլոր հասարակութեան հայոց և երևելի մահմետականաց: Արք որ սրբազան արքեպիսկոպոսը եկեղեցւոյն հարկաւոր տեղերը և զարդերը օժեց, զինուորներուն հրացաններուն ձայները և զանգակներուն հնչունները սրբազան հանգիսին կատարման աւետիսը ամեն բնակչաց ի մացուցին: Անկէ ետքը սուրբ պատարագ մատուցանելու առիթը՝ բոլոր հոգեւորականները և աշխարհականները ծնկան վրայ գալով՝ կայսերաժառանգ մեծ իշխանին և օգոստոսիա գերդաստանին կենացը համար աղօթք ըրին:

Ետքը՝ բոլոր երեւելի հանգիսականները 260 անձինք Ներսիսեան բարեպաշտ եղբարք տունը ճաշելու հրաւիրուեցան, և վեց սենեակներու մէջ պատրաստուած սեղաններուն բոլորովը նստելով՝ վեհափառ ինքնակալին, կայսերական գերդաստանին, իրավասու փոխարքայ իշխան Վարանցօյին, սրբաշնորհ կաթողիկոսին, Համախի գաւառապետին և եկեղեցւոյն շինող Ներսիսեան եղբարք կենացը գինի խմեցին և ամեն տեսակ բարե-

մաղթութիւնները ըրին:

Արք յարգոյ թղթակիցը այս լուրը մեզ հաղորդելով՝ կը յուսայ որ միւս քաղաքակիցներն ալ Ներսիսեան եղբարք գովելի և բարեպաշտական առատաձեռնութեան օրինակին հետեւելով՝ անօթից կամ որ և իցէ եկեղեցական զարդուց պակասութիւնները հոգալու պիտի աշխատին:

Պարոն տէր Հմառնեանին աղգանքական յուսոյն լրմանը մենք ալ աղօթակից ըլլալով, և Ներսիսեան եղբարք առատաձեռն բարեպաշտութիւնը առ հասարակ ամեն կարող հայ ազգիներէն խնդրելով՝ կ'աղօթեմք առ Ռուսաւաճ, որ Համախի սուրբ Ռուսաւաճանայ եկեղեցւոյն շինութեան կատարումը յաջողեցուն պէս՝ Օմիւռնիոյ սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյն ալ կատարուելուն ցանկալի լուր տունելու արժանացնէ զմեզ: Աս եկեղեցւոյն, ինչպէս որ յարգոյ ընթերցողաց յայտնի է, վեց եօթը տարի է որ այրած է, և կրկին շինութեան ալ շատոց ձեռք զարնւած է. և թէպէտ թէ սուրբ Նշուածաղէ մէն և թէ սուրբ Նշմիածինէն (այսինքն վեհափառ Վաթուղիկոսի իրախոսանքը՝ Ռուսաստանու բարեխեր հայ հասարակութենէն) գրամական մեծ օգնութիւններ տրուած է, զան, բայց բաւական ժամանակէ հետեւ շինութիւնը կիսատ մնացած է այս կամ այն պատճառներով, որոց բուն սկիզբը փնտռելու ըլլանք նե՛կ կարելի է՝ ցաւալի անմխաբաւութեան մէջ կը գտնանք: Այսու ամենայնիւ այս մօտերս լսեցինք, որ Օմիւռնիոյ երեւելիները ամենապատիւ սրբազան Պատրիարքին և վեհափառ Նշմիածինէն աղգանքով Վարդապետ Վարդանի գրեթէ հմուտ ճարտարապետ մը խնամել տրուել են, որն որ եկեղեցւոյն վերջապէս շինելու հարստա գիտաւորութիւն ունենալուն ապացոյց է: Եւ որովհետեւ աղգանքով Վարդան ալ որ և իցէ աղգանքի գործի վրայ իւր պաշտպանողական ձեռք դրելու ըլլայ նե՛կ այն գործը անպատճառ յառաջ կը աննի, մասնաւոր որ իջնորդ հայոց՝ վրայալ յապաւի ինքնաբէն, կը յուսամք որ քիչ ատենէն յիշեալ քաղաքի սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյն աւարտման լուրը պիտի բռնուիմք: Երկրպագութիւն չկայ որ վեհափառ Վաթուղիկոսն ալ իզմիրու հայոց եկեղեցւոյն շինելու համար գիտաւորութիւն հայերէն ժողովը առած ստակներուն մնացածը առ անգամ կ'ուղարկէ, որով՝ Այսեան Աղաւնայն կրկին առիթ կուտայ Հայրապետական շնորհայր յիշատակութիւնը ընելու:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Երկրպագութիւն իրաւական Սէհմէտ Ալի փաշայի որդին Սէհմէտ Ալի փաշա զբաղաւր (Ֆէրիք) որ պատերազմի նախարարութեան խորհրդոյն անգամ է, ամսոյս 1 ին երեքշաբթի օր Ալեքսանդրիա գացող Սաւաթ-Անուր Աւստրիական շոգենաւով մարաքաղաքէն մեկնեցաւ, առանձին գործով Երկրպագութիւնը համար: Այն օրը առաւօտուն Սեհմափառ Սաւաթին իւր խոնարհ ակնածութիւնը մատուցանելու գացած ըլլալով՝ Ն. Կ. մեծութիւնը մարդասիրութեամբ ընդունեց և անձնական արժանաւորութեան աղգանքաւոր պատուոյ նշանը շնորհելու բարեհաճեցաւ: Սէհմէտ Ալի փաշան շոգենաւը մոնպէն պառլ, բարձրագոյն գումար երթալով՝ Տէրութեան նախարարներուն հը-

1 Վեհափառ Սիւրիք Սիւրիայի աղգանքով հոյանաւորութեան տակը իջնոր բաղադրի հայ գերդաստաններ կենցաղակարգը միջոցներ ձեռք կը բերեն մարտասանը այս կամ այն գործի վրայ գործուած ըլլալով, որուն համար ալ անոր թանկագին կենացը անդադու աղօթելու են: Աս անգամ ալ եկեղեցւոյն շինութեան համար ճարտարապետ խաւրովը, ևս առաւել այն տեղէ հասարակութեան երախտագիտութիւնը շարժելու նոր առարկայ տուաւ: Աս ալ շնորհաբար յիշատակելու օր վեհափառ Սիւրիք, անցեալներ իջնոր գացած տեղեր իւր սովորական առատաձեռնութեամբ եկեղեցւոյն խաչկայն շինութեանը համար յիշու հազար զուռուշ շնորհեց:

Բաժարական այցելութիւն ըրաւ:

Կ'ըսեն թէ հանգուցեալ Կարահիմ փաշայի որդի Սուսթաֆա պէյն ալ, որ Արգարութեան Խորհրդոյն Վոենին անդամ է, մօտերս Ալեքսանդրիա պիտի երթայ:

Ռուսաւաճութիւն Սուսթաֆա Տէրութեան նախարարներուն և ամեն պաշտօնեայներուն կոստանդնուպօլսոյ նեղուցի ամառային տուններին երթալու հրաման տուած ըլլալով՝ Խորհրդապետի փոխարքան, օգը ներքու ըլլայ նե՛կ, երկու շաբթի իւր Պալատ լինանքի էալն երթալու է:

Գրապիղոնի և կոստանդնուպօլսոյ մէջ տեղը շաբաթը երկու անգամ օսմանեան շոգենաւուց երթուելութիւն պիտի ըլլայ: Չորեքշաբթի օրերը արքունի նախարարին և շաբաթ օրերը օսմանեան ընկերուէ շոգենաւերէն մեկը պիտի մեկնի մայրաքաղաքէս:

Փէյիթի ինձարէի շոգենաւը մեծ կղզին պիտի բանի. գինը մարդի գլուխ 6 զուռուշ ամսական 200 զուռուշ:

Վէյիթի ինձարէի շոգենաւը պիտի բանի, գինը մարդի գլուխ 5 զուռուշ և ամսական 170 զուռուշ:

Լաւիթի ինձարէի Սաթի գեղ և Այի Սիւֆանօ պիտի բանի. առաջնոյն գինը 3 զուռուշ և ամսական 90 զուռուշ, երկրորդին 4 զուռուշ և ամսական 140 զուռուշ:

Հիւսթի ինձարէի Սաթի գեղ պիտի բանի. առաջին տեղը 3 զուռուշ և ամսական 100 զուռուշ, երկրորդ տեղը 2 զուռուշ և ամսական 80 զուռուշ:

Երեք կամ վեց ամսուան համար ստորագրուողները յիշեալ գիններէն շատ վար պիտի վճարեն:

Մեծաւ հինգաթի իրիկուն Հեմի պէյի հրամանատարութեամբ ֆէյի պաշի անուն շոգենաւով ֆէյի մայրաքաղաքէս ելաւ գետի թովուտէս երթալու: Կ'ըսեն թէ Ռուսոս կղզին ալ պիտի հանդիպի յատուկ պաշտօնով մը: Յիշեալ ֆէյի երկու շաբթի օր գետ Չանաք քանդակէր:

Արք յարգի թղթակիցը անցած շաբաթ իզմիրէն գրած էր: «Բաղաքիս կառավարիչ Հաճի Հալիլ Բեհմիլ փաշան իր արթուն հակողութեամբ այս շաբաթուս ևս մեծ ըզը գումարութեամբ քանի մը կ'անհաճեցի (գողութեան համար) պոռներ և խանութներ կուխել տալով, քանի մը հատ շարագործ ու գող մարդիկ գտաւ ու քանտարքեց զանոնք: Բաւ ընկնում կառավարիչը մեծ հոգ ունի հասարակաց անդորրութեանը համար՝ ու ամեն նայն ջանիւ կ'աշխատի շարագործներուն գործողութեանը վերջ մը տալու, որոնք մեծ զրկանքներ ու անօրէն աւազակութիւններ կ'ընեն ժամանակ առ ժամանակ:

Մեծաւները իզմիր Յ. Կ. հայազգւոյն տունը գող մոնելով՝ տան տիկնոջ քանուշ հինգ հազար զուռուշ գողները գողնալով յիշեցինք լրագրիս մէջ. հիմա ուրախ եմք լսելու որ իզմիրի կառավարիչ Հալիլ Բեհմիլ փաշային արթուն տեսչութեան շնորհքով յիշեալ զարդերը գտնուելով տիրոջ տրուեցան, գողներն ալ բանտը գրուեցան:

Սէհմէտ Ալի փաշայի առաջ վեց կողով (սէրէթ) անիոն գողնուած էր իզմիրի կողմերը: Գողերը անհնար եղած էր գտնուել մինչև հիմա. բայց այս անգամ Հալիլ Բեհմիլ փաշան յիշեալ գողութեան թելը գտնուելու տեսչէն ինկաւ: Գերջապէս անցեալ հինգ շաբթի գողութեամբ ըստուած գիւղը մէկ տուն մը կոխել տուաւ, ու յիշեալ անիոններ երեք կողովը անարատ գտաւ: Կ'երեւի որ գողերը ձեռք ինչպէն վախնալով՝ համարձակութիւն են ասոնք ալ վաճառելու: Յիշեալ տան տէրը բանտը գրուեցաւ: Եւ լուրերը բոլորովն կը հաստատեն ինչ որ մեր թղթակիցը գրած էր Հաճի Հալիլ Բեհմիլ փաշային ամենուն հաճելի կառավարութեանը վրայ:

Երազրիս վերջին թերթովը յիշեցինք, որ իզմիր մատակ ձի մը արտաքոյ կարգի մը տրուէ (թայ) մը բերաւ որուն ճակատին մէջ տեղը եռանկիւնի աչք մը կայ: Աս դարմա-

նախ հրէշին մօրթոյն մէջ խոտ լեցնելով՝ մայրաքաղաքս ուղարկէր եւ և Պէյօղլու թէ- ակօյնի գիմայը խանութի մը մէջ գրուած է՝ հասարակութեան հետաքրքրութեանը համե- րու համար :

— Ինչպէս որ անցեալները յիշեցինք՝ ոստի- կանութեան բարեջան նախարարի տնօրինու- թեամբը բանտարկուած կասկածելի մարդիկ- ներէն 17 հոգի շաբաթ օր Իւրի Զամբով իրենց երկիրը պիտի աքսորուին : Հիշեալ շա- րագործներուն իմացուցած է, որ եթէ միւս անգամ մայրաքաղաքս գալու ըլլան նե՛ ան- միջապէս բռնուելով երեք տարի բանտը պի- տի գրուին, և աւելի ազգու կերպիւ պիտի պատժուին :

— Այսօր լրագրիս տպագրութեան ատե- նը վեհափառ կայսրը իւր սովորական հետե- ւակներովը, նաև Սեփագոր Տէրութեան նա- իարարները և վեհատիման Շէյխ — իւր — իւր լամէֆէնտին Սուլթան Պայազիտի Զաֆի (ա- ղօթատեղի) երթալով՝ պէտք եղած ուս- մունքը սովորած և քննութեան ատենը յառա- ջագէ՞մ գտնուած 53 սֆլանկերու վիսյագիր շնորհելու հանդէսը պիտի կատարեն : Այս վե- կայագրոյն զօրութեամբը անոր տէրերը իւ- լեպէյ-Իսկան (ուսանող) վիճակէն ելլալով՝ ու- սուցանող պիտի ըլլան, և ամեն տեղ դաս- տիարակութիւն ընելու իշխանութիւն պիտի ունենան :

— Սէլանիկի Հրէից գենպետին (խախտմ- պաշի) Սահմետական կրօնը ընդունելը կը լսեմք :

— Ուրիշ Հրէայ մըն ալ Յիսուսեան կը- րօնաւորներուն ձեռքը՝ մայրաքաղաքիս մէջ Հռոմէական կրօնը ընդունելու է :

— Ընդգիւցի և Վաղդիացի երեւելի ան- դամներէ կազմուած ընկերութիւն մը՝ Հը- ուովմէն Չիլիթա — Վէքթիա ծովեզերեայ քա- ղաքը երթալու երկաթուղին կատարելու ա- ռաջարկութիւնը ըրին Հռովմայու կառավա- րութեան :

— Թիֆլիզու Իւլիս անուն Ռուսերէն լը- րագիրը (որուն շատ անգամ պարտաւոր կ'ը- լամք Ռուսաստանի հայոց վրայօք լուրերնուս համար) մինչև հիմայ շաբաթը երկու անգամ երեքշաբթի և ուրբաթ օրերը հրատարակ- ուելով՝ միայն Կովկասեան գաւառներուն վերաբերեալ լուրեր կը պարունակէր : Բայց հիմայ հայասեր հրատարակիչը Պ. Սեփիկի կը ծանուցանէ, թէ 1852 ին յիշեալ լրագիրն թերթը մեծցնելով՝ Պարսկաստանի և Տաճ- կաստանի վրայօք ալ լուրեր պիտի գրէ և չո- րեքշաբթի ու շաբաթ օրերը տպելու է : Իւ- որովհետև այս կողմերու վերաբերեալ լու- րերուն աղբիւրը հայոց լրագիրները պիտի ը- լան կըսէ, պաշտօնակից եղբայրներինս կը յորդորեմք որ ազգիս պարծանաց առարկա- ները անպակաս ընեն իրենց պատուական լը- րագիրներուն մէջէն, որպէս զի հայասեր օ- տարազգւոյն հրատարակած թղթին մէջ ար- ձագանք գտնալով՝ աւելի հեռաւոր տեղեր հնչեն :

— Կը լսեմք որ այս տարի Թիֆլիզ քաղա- քը «բալալ» անունով վրացերէն շաբաթական լրագիր մը պիտի հրատարակուէր, բայց սկը- սելուն լուրը գեւ չ'աւինք : Ի՞նչ օտար ազգի վերաբերեալ առարկային վրայ խօսելուս պատճառը ան է, որ յիշեալ մանուկ արշալոյսի հրատարակիչ ըլլալու Կիւալ Լիւթիօլը իր յօ- րինած քանի մը թատերական երգերուն մէջ հայոց ազգին դպչելու խօսքեր գրելու հա- մարձակեր էր : Հիմայ եղբայրաբար կը խրա- տեմք որ՝ եթէ իր մանուկ արշալոյսի ծերանա- լը և կայրապապիս պատուանունն ոտանալը կ'ու- զէ նէ, իր անվայելուչ կիրքը զսպէ, ապա թէ ոչ հայազգի լրագրոց կողմէն մեծ հալա- ծանք կը տեսնէ :

— Պարսկաստանի զինուորական ծառայու- թեան մէջ նոր մտած աւսգրիացի պաշտօնեայ մը կը գրէ, թէ Պարսկաց ալժմեան կայսրը 22 տարեկան է, և յիշեալ կայսերութեան ա- մենագեղեցիկ մարդերէն մէկն է : Իւր մեծ հաւը (տէտէ) 300 կին ունեցեր է : Ուստի

և մեծ թիւ զաւակաց, որոնք ալ նմանապէս բազմանունդ ըլլալով՝ հիմայ կայսերական գերդաստանի անդամոց թիւը մինչև 10.000 ի կը հասնի :

— Փարէզ աս մօտերս ծերունի մը վախճա- նելով՝ ահագին հարստութիւն թողուցեր է, և անձուռնի կտակով մը անանկ տնօրինութիւ- ներ ըրեր է, որ կտակակատարները մեծ գըժ- ուարութիւններու մէջ կը ձգէ : (Օրինակի աղագաւ 300 հազար ֆրանք նշանակեր է որ քէն թէրթի թաղին մօտերը փողոցի մը մէջ գտնուած տանը մէջ տաւր տարիէ հետէ վար- ձով (քիւրայ) բնակող կամ յառաջուց բնա- կած բոլոր մարդիկներուն հաւասարաբար բաժնուի. ուր գտնալու է ան մարդիկը :

— Համպուրկ քաղաքի պօրաճ (վաճառա- կանաց գումարման տեղը) մարտի 10 ին բու- լոր վաճառականները հաւաքուած ատենը՝ եր- կու թմբակահարներ (տալուլը) հանդիսա- ւոր զգեստներ հագած՝ եկան թմբակի հար- կանել (տալուլ չալմաք) սկսան : Ետքը՝ եր- կու գործաւոր եկան պօրաճի մեծ դրան վրայ սեւ տախտակ մը գրին, որուն վրայ ձերմակի գի- րերով նոր սնանկացող վաճառականի մը ա- նունը գրուած էր : Իստախտակը կանգնեցնե- լէն ետքը՝ երկու ժամի չափ պօրաճի զանգակ- ներէն մէկը հնչեցուցին որն որ զանգակ աճիւն- կը յիշուի :

Խորթան աննկայ համար աս երեք տեսակ նախատանաց պատիժները չորեքտասներորդ- դարու մէջ հաստատուած օրէնքներով սահ- մանուած են : Եթէ ասանկ օրէնք մը աս երկիրներն ալ հաստատուելու ըլլայ, զան- գակի ձայնէն չափի ազատինք :

— Փարէզ աղւոր հագուած կին մը և բարձրահասակ մարդ մը թե թեի բռնած կը պտրտէին վէժէն ըսուած փողոցին մէջ : Հանկարծ ուրիշ կին մը դէմերնին ելլելով՝ բարձրահասակ մարդուն թե էն բռնող կնկան վրայ նետուեցաւ ու սկսաւ հայհոյել ու կա- տաղութեամբ ծեծկուել :

Սէլանիկի զարհուրելի կռիւ մը բացուե- լով՝ բարձրահասակ մարդը՝ ամհալուեալ բան մը չ'ընելով անկից աներեւոյթ եղաւ : Յիշ- եալ կնիկները (որոց մէկը մարդուն օրինա- ւոր և միւսը ապօրինաւոր կինն է եղեր) այն չափ ծեծկուեցան, որ վերջապէս մէկը ջլային սաստիկ հարուածով (սինիլ իլլէթի) մը գե- տին ինկաւ ու դեղավաճառի մը խանութ տարուեցաւ :

— Սանկաբարձ կանանց պէտք եղած ար- հեստը ուսուցանելու և փողոցագիւտ որբոց կըթուծելու տալու համար՝ Սօլուիկոյ մէջ նոր հաստատուած բարեպաշտական ուսում- նարանին Սօլիէօ Ռատոն Կոֆօպաթի կողմանէ ընծայ եղած 500 մաճառ ոսկին համար (որ 28 հազար զուռուշէն աւելի կ'ընէ) յիշեալ գաւառի իշխանը Հորհակալութեան գիր գը- րեր է :

Սօլիէօ Ս. Բարլաթ Վարնարն ալ նոյն գա- ւառի մէջ Տօրօհօ քաղաքի հասարակաց ու- սումնարանին մեծ գումար մը պարգևեր է, որպէս զի անոր տարեկան արգիւնելով յառա- ջագէ՞մ աշակերտաց վարձատրութիւն ըլլալով՝ մէկալներուն ալ քաջալերութիւն տրուի :

Յիշեալ արգեանց երրորդ մասովը յառա- ջագիմութեան առաջին միջանակը՝ ստացողին համար ընտիր գիրքեր պիտի տոնուի, երրորդ մասը՝ իւր երախտագիտութեան նշան ծնողա- ցը ստացուելու ընծայ մը գնելու պիտի գոր- ծածուի, և միւս երրորդ մասովը նմանապէս ընծայացու բան մը ծախու առնուելով գը- լաւոր ուսուցչին պիտի տրուի որ (բարե- պաշտ աղնուականին ընծայաբերութեան կը տակին մէջ յիշուելուն պէս) աշակերտին երկ- րորդ հայրն է :

Սարգստիրական գործոց լուրը աշխարհիս ուր կողմէն և ուր ազգի մէջէն ականջնիս հաւ- նելու ըլլայ, պարտք կը համարեմք Նոյեան Աղաւնուոյս միջոցաւ բարեսէր հասարակու- թեան հաղորդելու զայն, միշտ այն յուսով որ բարեպաշտ ազգակիցներնուս սրտին մէջ արձագանք գտնալով՝ մեր ալ ուսումնական

չինութիւններուն օգնութիւն ընելու առա- տածուեն անձինքը գրգռէ :

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼՈՒՄ 2 ԱՊՐԷԼ

Լըրոպիոյ համար արմուտաց վաճառումն չեղաւ աս շաբաթ : Վերջին քանի մը օրուան մէջ եկաններէն զանազան տեսակ 20.000 քի- լէի չափ տեղական գործածութեան համար առնուեցաւ : Հետեւեալ բարձր գիները թէպէտ հաստատ են, բայց շատ սպառող Նիգլիոյ և հիւսիսային Լըրոպիոյ երկիրնե- րէն եկած անյաղող լուրերուն նայելով՝ հար- կաւորաբար իջնալու են :

Կարծր ցորեն 150.000 քիլէ կայ : Ազօֆ 23 — 23 1/2 : Վեսարապիա 22 1/2 — 23 : Իւմէլի 19 1/2 — 20 : Կալաս 21 — 21 1/2 : (Մոհա 22 — 22 1/2 : Կալուզ ցորեն 80.000 քիլէ կայ : Իպ- րայիլ 13 — 14 : Իւմէլի 17 1/2 — 18 : Սնրացու- րեն չկայ : Իպրայիլ 12 1/2 — 13 : Գարի 20.000 քիլէ կայ : Իպրայիլ 9 1/2 — 10 : Հաճար չկայ : Գլըմ 12 1/2 — 13 : Վարսակ չկայ :

Չընշանակուած տեսակներուն գիները անցած շաբաթվումն արեւ են :

Գուրսէն եկած պղտատակերտ ապրանք- ները կամ գաղթականաց երկիրներուն բեր- քերը մեծ անշարժութեան մէջ են : Կը յու- սացուի որ ասկէ ետքը (զատիկի տօները՝ ան- ցած ըլլալով) ներքին երկիրներու մարդիկը գալով՝ ամառուան տօնախաճառներուն կամ զանազան տեղուանքներուն համար ապրանք գնելու ըլլան նե՛քիլ մը գործ տեսնուի :

Եսահանգաթի երկեւիտիւնը :

Այս կամ ձերմակի ծովէն մինչև երէկ 10 չոգենաւ եկաւ և 8 գնաց : Սարտի մինչև 28ը 38 առաքատոնաւ եկան, և 103 հատ գացին յիշեալ ծովերը :

ԶՄԻՒՌԻՆ 28 ՄԱՐՏ

Չատիկի տօները մօտ ըլլալուն և Լըրոպի- ոյ լուրերը յաջող չըլլալուն համար՝ քաղա- քիս առուստուրը աս շաբաթ մեծ անշարժու- թեան մէջ եղաւ : 40 հակ երկրորդ տեսակի տորոն 200 ի, 2 կողով ատիոն 113 ի, 100 հակ բամբակ 230 էն՝ 245 ի վաճառուեցաւ : Ղէհ- րին անցած շաբաթէն աղէկ էր : 9 1/2 էն 10 1/2 ի բաւական առնող եղաւ : Փալամուտ գինը հաստատ է, և վաճառում չըլլալուն պատճա- րը տէրերուն ծանրէն քաշելն է : Հալէպի գիտորը (մաղը) 660 — 670 զուռուշ գին ու- նի : Բուրգ 1200 զանթար հաղիւ կայ չուկային մէջ :

Փոխանակարոց ընկացի :

Ի ծնտօն 114 1/2 — 114 3/4 : Գաղղիա 180 — 181 թրեստ 362 : Կոստանդնուպօլիս 1/4 % շահով :

ԾԱՆՈՒՅՈՒՄՆ

Օրդուալի Յարգոյ Թաթիլիսան Պօղոս կայագի- ի իւր գծագիր և վիւագիրը Օսմանեան Թեմազը Կո- յեր-Թիսան Կիւնարի Սոլմէն Օսման առաջինէն ակտալ Բոլոր ինքնակալներուն գոնադարը և ոսկեղծ պապիկները շաբ գեղեցիկ գծագրելով՝ աս անգամ վիւագրել պո- եր է : Յիշեալ պապիկները երեսուն և Թի կապ էն, և ամեն Թի ինքնակալին ծախանիլն կապած գգեսպովը նկարած է :

Յիշեալ պապիկները ամեն Թի պիւր Թի ծախանիլ լինաւ : Եւ Թի Կապ առնող ըլլալ նե՛ կիւգ կիւգ ղո-տո-տ է : Իւրի թաթիլիսան Պ. Պօղոսի վիւագ- րապաշտը իւր վաճառում, և Կոստանդնուպօլիս Վե- ղի խանը Սիւհեթիսան Պ. Օրդուալիսի պա- րանը պիտի վաճառուի :

ՏԵԱՐԻ ԼՐԱԳՈՅՍ

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԿՈՍԵԱՆ = ՍԱՀԱՅ ԱՊՐՈԵԱՆ
Լիւրամբ Խարգմանապան Բարձրագոյն Դրան :

Կ. ՊՈԼԻՍ Ի ՅՊԱՐԱՆԻ ՏՕՀԱՆԵՆԻ ՄԻԿԵՆՏԻՍԵԱՆ